ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Մեր Փրկչի՝ Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսով ողջունում ենք Ձեզ և Փրկչի Իշման Սուրբ Սեղանից բերում Մեր սրտից բխած ամենաբարի մաղթանքները Ձեզ, պատմական սուրբ Աթոռիդ հոգևոր դասին և համայն մեր հավատացյալ զավակներին, աղոթքով ջերմագին, որ միշտ պայծառ, լուսառատ մնան սուրբ Աթոռիդ աղոթքի Տուները և միշտ նրանց Սուրբ Սեղաններից բարեպաշտ ժողովրդին բաշխվեն շնորհները Սուրբ Հոգու:

Մեր աղոթքն է, որ Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետված երկնառաք պատգամները լսելի դառնան մեր օրերի աշխարհին, ժողովուրդներին ու պետությանց ղեկավարներին, որպեսզի մարդկությանը խնայվի կործանարար արհավիրքը պատերազմների, և մարդիկ ու ազգություններ համերաշխ կերպով գտնեն փրկարար նավահանգիստը խաղաղության:

Աղոթենք նաև մեր Եկեղեցու և ժողովրդի կյանքի խաղաղության ու մեր բազմաչարչար ազգի արդար սպասումների իրագործման համար:

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Ամեն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: